



# ԻՐԱԿԱՆ ԵՎ ԻՄԻՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

### Հարցազրույց Հայաստանում Եվրամիության Առևտրի պալատի տնօրեն Հովհաննես Իգիթյանի հետ



Ի պաշտոնե Դուք տեղյակ եք Հայաստան-ԵՄ տնտեսական հարաբերությունների մանրամասներին: Ի՞նչ տնտեսական բաղադրիչներ կանոնադրեն ԵՄ-ի «Նոր հարևանության քաղաքականություն» և «Արևելյան գործընկերություն» ծրագրերում, որոնք ՀՀ-ի համար կարող են գործնական ազդեցություն ունենալ:

Հայաստան-ԵՄ հարաբերությունները ես կբաժանեմ 4 փուլի: Առաջինը նյութական օգնության փուլն էր, երբ ԵՄ-ն ծրագրերի ձևով ուղղակի օգնում էր ՀՀ-ին: Հետագայում այդ ծրագիրը ստացավ TACIS անվանումը, որը կարելի է համարել երկրորդ փուլ: TACIS-ի ծրագրերը բովանդակությամբ ավելի ընդգրկում էին և ուղղված էին ոչ միայն օգնությանը, այլ նաև համակարգերի ստեղծմանը: Հայաստան-ԵՄ հարաբերություններում որակապես նոր՝ երրորդ փուլ կարելի է համարել «Նոր հարևանության» ծրագիրը: Այն յուրաքանչյուր երկրի համար պարունակում է գործողությունների առանձին ծրագիր: Եվ յուրաքանչյուր երկիր ձևավորում էր իր հարաբերությունները ԵՄ-ի հետ: Եթե փորձենք կարծիք ակնարկել՝ ինչ է նշանակում «Նոր հարևանության» ծրագիրը, ապա հենց անվանման մեջ առկա է բովանդակությունը: Այսինքն՝ ԵՄ-ն ցանկանում է ունենալ կայուն և բարեկեցիկ հարևաններ: Եվ վերջին՝ չորրորդ փուլը «Արևելյան գործընկերության» ծրագիրն է: Կրկին անվանման մեջ առկա է բովանդակությունը: Կարելի է տեսականորեն նշել, որ ԵՄ-ի ընդլայնումը դեպի Արևելք սահմանափակվում է ծրագրում ընդգրկված 6 երկրներով: Գուցե շատ հեռավոր ապագայում այս երկրները կարող են դառնալ ԵՄ անդամներ: Եվ այս ծրագրում կան այն բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են ավելի լայն ինտեգրացիայի համար՝ ազատ առևտրի գոտու ստեղծում այս երկրների միջև, վիզային ավելի բարենպաստ ռեժիմի սահմանում, էներգետիկ համագործակցություն: Արևելյան գործընկերությունը շատ ճկուն համակարգ է: Այսինքն՝ ամեն երկիր կարող է վերցնել այնքան, որքան ինքը կարող է, այսպես ասած, մարսել իր ունակությունների և զարգացման մակարդակի շրջանակներում: Այս ծրագիրը ավելի հստակ ծրագիր է, և իմիտացիոն պրոցեսներով արդեն չես կարող ձևացնել, թե դու

ԵՄ-ի գործընկերն ես, այսինքն՝ երկիրը պետք է կոնկրետ քայլեր անի:

Ինչպես «Նոր հարևանության», այնպես էլ «Արևելյան գործընկերության» ծրագրերում ներառված են տնտեսական հարաբերությունների վերաբերող կոնկրետ գործիքներ: Ձեր կարծիքով, ԵՄ-ը գործնականում կկիրառվեն այդ գործիքները, և ԵՄ-ը կարելի է կոնկրետ արդյունքներ ակնկալել:

Հայաստանը վաղուց արդեն ընդգրկված է GSP-ի, այսինքն՝ արտոնությունների համընդհանուր համակարգում: Դա հնարավորություն է փոքր-ինչ արտոնյալ պայմաններով ԵՄ-ի շուկա մուտք գործելու համար: Դա երկու կողմից էլ շահավետ է: Մի կողմից՝ ՀՀ-ի մասն երկրներին հնարավորություն էր տրվում կես միլիարդ վճարունակ սպառող ունեցող շուկա մուտք գործել, մյուս կողմից՝ եվրոպական սպառողին ապահովել և գնի ընտրության հնարավորություն էր տրվում: Դա մեծ հնարավորություն է ՀՀ-ի տնտեսության զարգացման համար: Եթե համեմատենք մեր հարևանների և ռուսական շուկայի հետ, պարզ է, որ ԵՄ-ի շուկան և վարչարարության և օրենսդրական և ոչ կոռուպացիայի լինելու տեսանկյունից ավելի զարգացած է և վճարունակ: Այդ համակարգը՝ GSP-ն, կարող էր գործել նույնիսկ առանց «Արևելյան գործընկերության» ծրագրի և արդեն սկսում էր արդյունքներ տալ 3-4 տարի առաջ: Բայց այստեղ առաջ են գալիս ներքին տնտեսական և ինչու չէ՞ ներքին քաղաքական խնդիրներ: Խնդիրը միայն այն չէ, որ մեր ապրանքը չի կարող մտնել եվրոպական շուկա, խնդիրն այն է, որ ՀՀ-ի արտահանումը վերջին 3 տարիների ընթացքում նվազել է, և առաջին հերթին դա կապված է դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի արհեստական արժևորման հետ: Ստացվում է, որ ունենալով շատ թանկ տեղական արժույթ, մեր ապրանքի ինքնարժեքը արհեստականորեն բարձրանում է: Դրան գուժարկված նաև համաշխարհային ճգնաժամը: Բացի այդ, Հայաստանը այս 6 երկրների համեմատ ունի տրանսպորտային ավելի մեծ ծախսեր:

Որքանով էք հնարավոր համարում երբևէ Հայաստանի անդամակցությունը ԵՄ-ին:

ԵՄ-ին անդամությունը պետք է դիտարկենք ոչ թե տեխնիկական, այլ արժեքների համակարգի, մենթալիտետի տեսանկյունից՝ այսինքն՝ որքանով ես դու քեզ տեսնում այդ համակարգում: Օրինակ՝ Շվեյցարիան, Նորվեգիան կամ Իսլանդիան ԵՄ-ի անդամներ չեն, բայց լիովին տեղավորվում են այդ համակարգում: Ցավոք, Հայաստանը, հատկապես ՀՀ իշխանությունը, իր գործունեությամբ չի տեղավորվում այդ համակարգում: Եվ հակառակը՝ կարծում են՝ իշխանությանը թվում է, որ որքան այդ համակարգը ավելի զարգանա ՀՀ-ում, այդքան իրենք ավելի քիչ շահ կունենան իշխանությունը պահպանելու: Այս տեսանկյունից հենց իշխանական ճամբարում կան բավականին ազդեցիկ շատ ուժեր, որոնք պայքարում են անդամության ուղղությամբ կատարվող գործնական քայլերի դեմ՝ ձևակառույց են ցույց տալով, որ հավատարիմ են այդ ուղուն:

Հրույց ԼԻԼԻՔ ՍԵՅՐԱՆՅԱՆԸ

## Եվրոպացիները հավատում են Եվրամիությանը

Վերջերս անցկացված հետազոտություններից մեկի համաձայն Եվրոպացիների 61%-ը կարծում են, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամը դեռ ազդելու է իրենց աշխատանքի վրա: Ընդ որում, նրանց մեկ երրորդը համոզված է, որ կորցնելու է աշխատանքը: Սակայն նույն ժամանակահատվածում արդյունքներով Եվրոպացիները լավատես են: Հարցվածների 71%-ը կարծում է, որ Եվրամիությունը դրական դեր է խաղում նոր աշխատատեղերի ստեղծման և գործազրկության կրճատման գործում: Մեկ երրորդը տեղյակ է Եվրոպական սոցիալական հիմնադրամի մասին, որը աշխատուժի մեջ ներդրումներ կատարելու և նրանց աշխատատեղերը պահպանելու գործում ԵՄ-ի գլխավոր գործիքն է: Հարցվածների 32%-ը «խիստ անհանգստացած» է աշխատանքի հնարավոր կորստով, 38%-ը մտահոգված են իրենց կանանց (կամ ամուսինների), իսկ 47%-ը՝ երեխաների աշխատանքի համար: Աշխատանքը կորցնելու առնչությամբ մեծացող անհանգստությունը կապված է մասսայական կրճատումների մասին գրեթե ամենօրյա լուրերի հետ: Բացի այդ Եվրոպացիները ճգնաժամի հաղթահարման հարցում այնքան էլ լավատես չեն: Տասից վեցի կարծիքով՝ տնտեսական ճգնաժամի ամենավատ հետևանքները դեռ առջևում են: Ընդ որում՝ ամենից հոռետեսը Բալթյան երկրների բնակիչներն են. ավելի ծանր ժամանակների սպասում են լատվիացիների 82%-ը, Բուլղարացիների 76 և լիտվացիների 74%-ը: Հարցմանը մասնակցած Եվրոպացիների միայն 28 տոկոսն է համարում, որ ճգնաժամն արդեն հասել է իր պիկին, և ամենավատ բաները մնացել են ետևում: Ըստ հարցման արդյունքների, այս հարցում Եվրոպայում ամենավատատես են շվեդները (45%) և դանիացիները (36%): Եվրոպացիները, հավատալով Եվրամիությանը, այդուհանդերձ, կարծում են, որ աշխատանք գտնելու հարցում ամենակարևոր գործոններն են աշխատանքային փորձը, մասնագիտական որակները և նոր միջավայրին արագ ադապտացվելու ունակությունը:

Հրույց ԼԻԼԻՔ ՍԵՅՐԱՆՅԱՆԸ

# «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴԵՌԵՎՍ ԱՆԵԼԻՔՆԵՐ ԿԱՆ»

### Հարցազրույց Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության ղեկավար Ռաուլ դե Լուցենբերգերի հետ

Պրն դեսպան, ինչպե՞ս կգնահատեք Եվրախորհրդարանի ընտրությունները: Մասնավորապես, լրատվամիջոցները և քաղաքագետները մտահոգություն են հայտնել 43.4 % կազմող ցածր մասնակցության կապակցությամբ: Ձեր կարծիքով՝ ո՞րն էր Եվրոպացի քվեարկողների պատիվ մասնակցության պատճառը:

Եվրամիությունն արագ զարգացող կառույց է: Եթե ուսումնասիրենք վերջին տարիները, ապա կտեսնենք, որ տարատեսակ ընդլայնումների միջոցով, ինչպիսիք են միասնական շուկայի, տարադրամի՝ եվրոյի և Շենգեն գոտու ստեղծումը, զգալի առաջընթաց է գրանցվել: ԵՄ-ի դիմամիկ զարգացումը թույլ է տվել աջակցել տարբեր տարածաշրջաններին, ներառյալ Հարավային Կովկասին: Ինչ վերաբերում է ընտրություններին, ապա, իմ կարծիքով՝ անհրաժեշտ է դրանք դիտարկել ավելի լայն համատեքստում, և չմոռանալ, որ այս ընտրությունները մասնակցության ակտիվությամբ համապատասխանում են Եվրախորհրդարանի անցյալ ընտրություններին: Անշուշտ, դա քաղաքական կուսակցությունների և Եվրախորհրդարանի թեկնածուների խնդիրն է՝ վերլուծել և գնահատել մասնակցության ցուցանիշները: Սակայն ընդհանուր առմամբ օրենսդիրները և ԵՄ կառույցներն աշխատում են ի մի բերել համաեվրոպական և տեղական, ազգային մակարդակներում կատարված և լուսաբանել Եվրամիության ձեռքբերումները:

Արդյո՞ք քվեարկության արդյունքներն ամբողջովին արտացոլում են Եվրոպական համայնքների քաղաքական նախապատվությունները: Ինչպե՞ս կմեկնաբանեք պահպանողական և սոցիալիստական ուժերի հաղթանակը և արդյո՞ք համաձայն եք, որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը կավելացնի սոցիալիստամետ մարդկանց բանակը:

Այսօրվա պրոբլեմները պահանջում են ազգային և համաշխարհային լուծումների համատեղ կիրառում: Ոչ մի ազգ միայնակ չի կարող հաղթահարել այսօրվա ամենամեծ մարտահրավերները և զլոբալ հարցերը, ինչպիսիք են միջազգային ֆինանսական ճգնաժամը, կլիմայի փոփոխությունը, էներգետիկ անվտանգությունը և միգրացիան: Սա նաև վերաբերում է Հայաստանին: Վստահությունը և հստակ պատկերացումները կարևոր են այս բարդ խնդիրները լուծելու համար: Նայեք Եվրոպային: ԵՄ-ի զարգացումն իրենից ներկայացնում է վստահության և հստակ տեսլականի կիրառման օրինակ, որի միջոցով բաժանարար գծերն իրենց տեղը զիջեցին հանընդհանուր արժեքներին, իսկ բազմազանությունը դարձավ լրացուցիչ արժեք: Եվրոպական երկրներն այդ առումով ինչ ավանդույթներ ունեն, և Եվրամիությունն անդամ-երկրների, ԵՄ կառույցների և հարևան երկրների համար հնարավորություն է տեսնում միասին աշխատել՝ գտնելու համար համընդհանուր լուծումներ և ստանալ զլոբալ պատասխաններ: Եվրախորհրդարանի ընտրությունները տեղի ունեցան այն ժամանակ, երբ մարդիկ սկսում են զգալ ճգնաժամը: Իհարկե, նման մասշտաբի ճգնաժամն իր ազդեցությունը կունենա ցանկացած ընտրության վրա: Ընտրվածները ստիպված կլինեն գնալ քաղաքական գիշումների, որոնք կօգնեն Եվրոպային և ողջ աշխարհին դուրս գալ ճգնաժամից:

Կարո՞ղ են ընտրությունների արդյունքները և քաղաքական ուժերի կառուցվածքային փոփոխությունը որևէ կերպ ազդել ԵՄ «Նոր հարևանության» քաղաքականության վրա:

Եվրոպական հարևանության քաղա-



քականությունը ԵՄ-ի և հարևան երկրների միջև համագործակցության, երկխոսության և փոխադարձ հարգանքի հաջողակ օրինակ է: ԵՄ-ն 2004թ. մայիսին ԵՄ ընդլայնմանը հաջողորմ ԵՄ արագ արձագանք էր նոր քաղաքական իրականությանը, որով ԵՄ-ն որոշեց իր նոր հարևանների հետ հարաբերություններին նոր շրջանակ ընդունել: ԵՄ նպատակն է՝ խուսափել ընդլայնված Եվրոպայի և նոր հարևանների միջև նոր բաժանարար գծերի առաջացումից, ինչպես նաև՝ անրապնդել շահագրգիռ կողմերի բարեկեցությունը, կայունությունը և անվտանգությունը: ԵՄ-ն նոր հարևաններին առաջարկում է արտոնյալ հարաբերություններ, որոնք հիմնված կլինեն փոխադարձ հանձնառությունների և համընդհանուր արժեքների վրա (ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն, լավ կառավարում, շուկայական տնտեսության սկզբունքներ և կայուն զարգացում): ԵՄ-ն առկա հարաբերությունների սահմաններից դուրս է ընդլայնվել՝ առաջարկելով ավելի խորը քաղաքական կապեր և տնտեսական ինտեգրում: Վերջերս մեկնարկած Արևելյան գործընկերությունը հիմնվելու է այս հաջողակ տեսլականի վրա: Համոզված եմ, նոր խորհրդարանը կշարունակի խրախուսել այն:

Ինչպե՞ս կգնահատեք ԵՄ իրականացումը մասնավորապես ՀՀ-ում:

Համագործակցությունը և երկխոսությունը ԵՄ հաջողության կարևոր բաղադրիչներն են: Հանձնաժողովը պատրաստ է աջակցել Հայաստանին, որպեսզի այն՝ լուծելով լավ կառավարման և մարդու իրավունքների հետ կապված հարցերը՝ դառնա ավելի ուժեղ տնտեսական գործընկեր: ԵՄ խորհրդարանական խումբը, կոչված օգնելու հայաստանյան իշխանություններին իրականացնել բարեփոխումային ծրագրերը, իրենից ներկայացնում է մեր հանձնառության լավագույն օրինակը: Արևելյան գործընկերության իրականացումը հնարավորություն կընձեռի հետապայուսման կապակցումը մեր համատեղ աշխատանքը մասնավորապես հայաստանյան ժողովրդավարական կառույցների ամրապնդման, տնտեսական բարեփոխումների և օրենսդրական համապատասխանեցման գործում: Բարեփոխումները չեն կարող իրականացվել մեկ օրում և, բնականաբար, Հայաստանում դեռևս անելիքներ կան, օրինակ՝ լավ կառավարմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և դատական համակարգի անկախությանը վերաբերող հարցերում: Այնուամենայնիվ, թույլ տվեք ընդգծել իմ գնահատանքը բարեփոխումների իրականացման ուղղված Հայաստանի շահագրգռվածության և պատրաստակամության բարձր աստիճանի համար: Այս բարեփոխումները չափազանց կարևոր են Հայաստանի համար ԵՄ-ի հետ ավելի սերտ կապերից օգուտներ քաղելու իմաստով:

Հրույց ԼԻԼԻՔ ՍԵՅՐԱՆՅԱՆԸ